ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈԱՇ. ԿԱՊԸ ՄԿԾ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐՅԴՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

	ԳԻՏԵԼԻՔ Գիտելիքն այն է, ինչ շրջանավարտը գիտի և հասկանում է: Գիտելիքը նկարագրվում է ըստ ծավալի, խորության, տեսակի և բարդության:				
ՈԱՇ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՄԱԿԱՐԴԱԿ	**Խումբ**	**Ենթախումբ**	**ՈԱՇ-ի նկարագրիչներից դուրս բերված հիմնական բառեր**	**Գիտելիքի բովանդակություն**	**ՄԿԾ համապատասխան ուսումնառության արդյունքներ**
Ցուցաբերում է **համապարփակ գիտելիքներ և տվյալ մասնագիտական ոլորտում առկա տեսությունների և մեթոդների ընկալում,** որոնց մի մասը **առանցքային գիտելիքներ** են և հիմք են ծառայում՝ **անկախ հետազոտությունների** իրականացման համար:	**Գիտելիք**	**Ծավալ** Որքա՞ն ընդգրկուն են սովորողի գիտելիքները:	**Տվյալ մասնագիտական ոլորտ և միջառարկայական տիրույթ**		
		Խորություն Որքա՞ն խորքային և ամբողջական են սովորողի գիտելիքները:	**Համապարփակ գիտելիքներ և ընկալում**		
		Գիտելիքի տեսակներ Ի՞նչ բնույթի կամ որակի գիտելիքների է տիրապետում սովորողը:	**Տեսություն և մեթոդներ (փաստացի գիտելիքներ)**		
			Տեսություն և մեթոդներ (կոնցեպտուալ գիտելիքներ)		
			Տեսություն և մեթոդներ (ընթացակարգային գիտելիքներ)		
			Հիմք՝ անկախ հետազոտությունների իրականացման համար **(Մետաճանաչողական գիտելիքներ)**		
ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ Հմտությունն այն է, ինչ շրջանավարտը կարող է անել: Հմտությունները նկարագրվում են ըստ ծավալի և բարդության և ներառում են ճանաչողական, տեխնիկական, հաղորդակցման, ստեղծագործական, միջանձնային հարաբերությունների և ընդհանրական հմտություններ:					
ՈԱՇ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՄԱԿԱՐԴԱԿ	**Խումբ**	**Ենթախումբ**	**ՈԱՇ-ի նկարագրիչներից դուրս բերված հիմնական բառեր**	**Գիտելիքի բովանդակություն**	**ՄԿԾ համապատասխան ուսումնառության արդյունքներ**
Կարող է համակողմանիորեն կիրառել ոլորտի հայեցակարգային և մեթոդաբանական սկզբունքները՝ մասնագիտական բնագավառում (կամ միջառարկայական տիրույթում) ոչ ամբողջական տեղեկատվության պայմաններում կամ նոր և անծանոթ իրադրություններում տեսական և գործնական խնդիրների լուծման համար: **Կարող է օգտագործել մասնագիտական հաղորդակցման միջոցներ՝ իր եզրահանգումները և հետազոտության արդյունքները մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը համակարգված կերպով ներկայացնելու համար:**	**Հմտություն**	**Ծավալ** Ի՞նչ ընդգրկում/ծավալ ունեն սովորողի ձեռք բերած ֆիզիկական, մտավոր, սոցիալական և այլ	• **համակողմանիորեն** • **ոլորտի հայեցակարգային և մեթոդաբանական սկզբունքները** • **համապատասխան ոլորտում** • **մասնագիտական և ոչ մասնագիտական լսարան** • **մասնագիտական բնագավառում (կամ միջառարկայական տիրույթում) ոչ ամբողջական տեղեկատվության պայմաններում կամ նոր և անծանոթ իրադրություններում տեսական և գործնական խնդիրների լուծում** • **համակարգված կերպով ներկայացնել սեփական եզրահանգումները և հետազոտության արդյունքները մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը** • **կիրառել ՏՀՏ-ներ** • **լուծել նոր բարդ խնդիրներ** • **խթանել հետազոտական աշխատանքներին**		

Կարող է կիրառել S2S-ներ մասնագիտական ոլորտում նոր, բարդ խնդիրներ լուծելու և հետազոտությունը օժանդակելու համար: Կարող է վերլուծել և գնահատել տվյալ ոլորտին առնչվող քանակական և որակական տվյալներ՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու համար:		:	առնչվող քանակական և որակական տվյալները • տալ եզրակացություններ և ընդունել որոշումներ՝ տիրապետելով ոչ լիարժեք կամ սահմանափակ տեղեկատվության • հետազոտել և դուրս բերել նոր գաղափարներ, հայեցակարգեր, տեսություններ և/կամ հետազոտության թեմաներ • առաջարկել նորարարական ու ստեղծագործական լուծումներ, որոնք ընդլայնում են ոլորտի գիտելիքն ու պրակտիկան		
	ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ Կարողությունը գիտելիքների և հմտությունների կիրառումն է համատեքստում: Արտահայտվում է ըստ ինքնավարության, պատասխանատվության և հաշվետվողականության: Համատեքստը կարող է լինել կանխատեսելի և անկանխատեսելի, ծանոթ և անծանոթ, առօրեական և ոչ առօրեական:				
ՈԱՇ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՄԱԿԱՐԴԱԿ	**Խումբ**	**Ենթախումբ**	**ՈԱՇ-ի նկարագրիչներից դուրս բերված հիմնական բառեր**	**Գիտելիքի բովանդակություն**	**ՄԿԾ համապատասխան ուսումնառության արդյունքներ**
Ունակ է լուծելու բարդ խնդիրներ և կատարելու առաջադրանքներ եղ մասնագիտական կամ կրթական ոլորտում, ինքնուրույն կառավարելու նոր մոտեցումներ պահանջող աշխատանքային իրադրություններ՝ ցուցաբերելով ինքնավարություն/ինքնուրույնություն և մասնագիտական անկախություն, նպաստելու գիտելիքի, մասնագիտական գործունեության և հետազոտության առաջընթացին, պատասխանատվություն ստանձնելու թիմում այլոց աշխատանքի համար և ղեկավարելու այն: Ունակ է սահմանելու իր սեփական կրթական պահանջմունքները և ինքնուրույն շարունակելու ուսումնառությունը:	**Կարողություն**	**Ինքնավարություն և պատասխանատվություն** Սովորողն ինչպե՞ս է պատասխանատվություն ստանձնում անձնապես և խմբում: Սովորողն ինչպե՞ս է կիրառում ձեռք բերված հմտությունները այլոց հետ փոխգործակցելիս կամ ինքնուրույնաբար աշխատելիս: **Ինքնազարգացում** Սովորողը որքանո՞վ է կարողանում գործել նոր միջավայրում, ձեռք բերել նոր գիտելիքներ ու հմտություններ և դրանցով համալրել իր ունեցած	ցուցաբերելով ինքնավարություն/ինքնուրույնություն և մասնագիտական անկախություն պատասխանատվություն ստանձնելու թիմում այլոց աշխատանքի համար և ղեկավարելու այն սահմանելու սեփական կրթական պահանջմունքները և ինքնուրույն շարունակելու ուսումնառությունը: լուծել բարդ խնդիրներ և կատարելու առաջադրանքներ եղ մասնագիտական կամ կրթական ոլորտում, ինքնուրույն կառավարելու նոր մոտեցումներ պահանջող աշխատանքային իրադրություններ՝ ցուցաբերելով ինքնավարություն/ինքնուրույնություն և մասնագիտական անկախություն, նպաստելու գիտելիքի, մասնագիտական գործունեության և հետազոտության առաջընթացին		

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՄԿԾ-Ի ԵՎ ՄՈԴՈՒԼԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՆՄՈՒԾ[8]

ՄԿԾ ձևանմուշ: Մակարդակ 8
ՄԿԾ թվանիշը
ՄԿԾ անվանումը/ շնորհվող որակավորումը
Ծրագրի համակարգողը
Ֆակուլտետը
ՈԱԾ-ի մակարդակը
ECTS կրեդիտները
Ծրագրի տևողությունը
Ծրագրի նկարագիրը

ՄԿԾ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ : ՄԱԿԱՐԴԱԿ 8

Ուղենիշ: Յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար հանձնարարելի է ուսումնառության 8-12 արդյունք՝ խմբերից յուրաքանչյուրում (գիտելիք, նոու հաու և հմտություն, կարողություն) ՄԿԾ ուսումնառության երկու արդյունքի ուղենիշներով:

Ծրագիրը բարեհաջող ավարտելուց հետո շրջանավարտը պետք է կարողանա՝

Գիտելիք

Ենթախմբեր

Գիտելիքի ծավալ: Ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների ու մեթոդների վերաբերյալ ընդհանուր գիտելիք և իմացություն:

Գիտելիքի տեսակ: Տվյալ մասնագիտության և հարակից ոլորտների նորագույն տեսություն¬ների ու մեթոդների վերաբերյալ համա¬կողմանի գիտելիք և իմացություն:

[8] Այս ձևանմուշներն արտացոլում են Իռլանդիայում ընդունված կրթական մակարդակները, որոնք չեն համապատասխանում ՀՀ ՈԱԾ-ով սահմանված մակարդակներին: Այդուամենայնիվ, ձևանմուշները կարող են հաջողությամբ ծառայել որպես նկարագրիչների այլընտրանքային նմուշներ, որոնք հետագայում կարող են տեղայնացվել՝ հարմարեցվելով մասնավոր կարիքներին:

Նոու հաու և հմտություն

Ենթախմբեր

Ծավալ: Տիրապետել մասնագիտական ոլորտում անհրաժեշտ հմտությունների և գործիքների, կիրառելով և փոփոխելով առաջնակարգ հմտություններն ու գործիքները՝ ղեկավարի անմիջական ուղղորդմամբ կատարել հետազոտություն, ծավալել մասնագիտական կամ նորարարական տեխնիկական գործունեություն:

Վերաբերելիություն: Պլանավորման, մշակման, կառավարման և/կամ տեխնիկական տարբեր գործառույթների իրականացման ընթացքում վերաբերելի դատողություններ անել ապրանքների, ծառայությունների, գործառնությունների կամ գործընթացների, ինչպես նաև ռեսուրսների բաշխման մասին:

Կարողություն

Ենթախմբեր

Համատեքստ: Հետազոտական, տեխնիկական կամ մասնագիտական գործունեության մեջ կիրառել արդիական հմտություններ՝ ստանձնելով որոշումների կայացման ողջ պատասխանատվությունը, տարբեր համատեքստերում փոխանցել և կիրառել հայտորոշիչ և ստեղծագործական հմտություններ:

Դեր: Որակավորված մասնագետների հետ հարաբերություններում գործել արդյունավետորեն՝ որոշակի ուղղորդման պայմաններում, ղեկավարել բազմանդամ, բազմատարր և տարասեռ խմբեր:

Սովորել՝ ինչպես սովորել: Սովորել գործել ուսումնական զանազան և անծանոթ համատեքստերում, սովորել առաջադրանքներն ինքնուրույն կատարել՝ պահպանելով պրոֆեսիոնալիզմի և էթիկայի նորմերը:

Ներընդգրկում: Արտահայտել անձնական համապարփակ աշխարհընկալումը՝ համերաշխություն պահպանելով այլ անձանց հետ:

ՄԿԾ ձևաչանմուշ: Մակարդակ 9
ՄԿԾ թվանիշ
ՄԿԾ անվանումը/ շնորհվող որակավորումը
Ծրագրի համակարգողը
Ֆակուլտետը
ՈԱԾ-ի մակարդակը
ECTS կրեդիտները
Ծրագրի տևողությունը
Ծրագրի նկարագիրը

ՄԿԾ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ: ՄԱԿԱՐԴԱԿ 9

Ուղենիշ: Յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար հանձնարարելի է ուսումնառության 8-12 արդյունք՝ խմբերից) յուրաքանչյուրում (գիտելիք, նոու հաու և հմտություն, կարողություն ՄԿԾ ուսումնառության երկու արդյունքի ուղենիշներով:

Ծրագիրը բարեհաջող ավարտելուց հետո շրջանավարտը պետք է կարողանա՝

<u>Գիտելիք</u>

Ենթախմբեր

Գիտելիքի ծավալ: Դրսևորել գիտելիքի (որի մի մասն այդ բնագավառի վերջին ձեռքբերումներն է) համակարգային ըմբռնում:

Գիտելիքի տեսակ: Դրսևորել առկա խնդիրների և նոր գաղափարների անհրաժեշտ իմացություն, որոնց մի մասը այդ բնագավառի վերջին ձեռքբերումներն են:

<u>Նոու հաու և հմտություն</u>

Ենթախմբեր

Ծավալ: Տիրապետել հետազոտության կամ հարցման (հարցախույզի) մի շարք ստանդարտ և մասնագիտական գործիքների ու հնարների:

Վերաբերելիություն: Ընտրել ուսումնառության ոլորտին վերաբերելի բարդ և առաջանցիկ հմտություններ, զարգացնել նոր հմտություններ, այդ թվում նաև նոր ու զարգացող հնարներ՝ դրանք հասցնելով ավելի բարձր մակարդակի:

<u>Կարողություն</u>

Ենթախմբեր

Համատեքստ: Գործել մասնագիտական լայն, հաճախ անկանխատեսելի և վատ սահմանված համատեքստերում:

Դեր: Ստանձնել էական պատասխանատվություն անհատների և խմբերի աշխատանքի համար, գործունեություն նախաձեռնել և ղեկավարել:

Սովորել՝ ինչպես սովորել: Ինքն իրեն գնահատել և պատասխանատվություն ստանձնել շարունակական ուսումնական/ մասնագիտական զարգացման համար:

Ներընդգրկում: Ուսումնասիրել և կարծիք հայտնել սոցիալական նորմերի և հարաբերությունների վերաբերյալ, ինչպես նաև քայլեր ձեռնարկել դրանք փոփոխելու ուղղությամբ:

ՄԿԾ ձևանմուշ: Մակարդակ 10
ՄԿԾ թվանիշ
ՄԿԾ անվանումը/ շնորհվող որակավորումը
Ծրագրի համակարգողը
Ֆակուլտետը
ՈԱԾ-ի մակարդակը
ECTS կրեդիտները
Ծրագրի տևողությունը
Ծրագրի նկարագիրը

ՄԿԾ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ: ՄԱԿԱՐԴԱԿ 10

Ուղենիշ: Յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար հանձնարարելի է ուսումնառության 8-12 արդյունք՝ խմբերից յուրաքանչյուրում (գիտելիք, նոու հաու և հմտություն, կարողություն) ՄԿԾ ուսումնառության երկու արդյունքի ուղենիշներով:

Ծրագիրը բարեհաջող ավարտելուց հետո շրջանավարտը պետք է կարողանա՝

Գիտելիք

Ենթախմբեր

Գիտելիքի ծավալ: Համակարգված ձևով ձեռք բերել նոր գիտելիք, որն ուսումնառության բնագավառի վերջին ձեռքբերումներից է, և հասկանալ գիտելիքի առանցքային բովանդակությունը:

Գիտելիքի տեսակ: Հետազոտության կամ գիտական բարձրակարգ այլ գործունեության միջոցով ստեղծել նոր գիտելիք և այն մեկնաբանել այնպիսի որակով, որը կբավարարի հավասարակիցների գնահատման պահանջները:

Նոու հաու և հմտություն

Ենթախմբեր

Ծավալ: Տիրապետել զգալի թվով հիմնական հմտությունների, հնարների, գործիքների, գործառությունների և/ կամ նյութերի, որոնք կապված են ուսումնառության ոլորտի հետ, զարգացնել նոր հմտություններ, հնարներ, գործիքներ, գործառություններ և/ կամ նյութեր:

Վերաբերելիություն: Համարժեքորեն արձագանքել վերացական խնդիրներին, որոնք ընդլայնում և վերասահմանում են առկա ընթացակարգային գիտելիքը:

Կարողություն

Ենթախմբեր

Համատեքստ: Մասնագիտական կամ համարժեք համատեքտում անձնական պատասխանատվություն ստանձնել և նախաձեռնողականություն հանդես բերել բարդ և անկանխատեսելի իրադրություններում:

Դեր: Հավասարակիցներին ներկայացնել հետազոտական և նորարարական աշխատանքների արդյունքները, ներգրավվել քննադատական երկխոսության մեջ, առաջնորդել և իրականացնել սոցիալական բարդ գործընթացներ:

Սովորել՝ ինչպես սովորել: Սովորել քննադատել որոշակի համատեքստում գիտելիքի կիրառման ավելի ծավալուն փորձերը: Սովորել գնահատողական մեկնաբանություններ տալ այն ավելի լայն ազդեցություններին, որոնք կոնկրետ իրավիճակներում գիտելիքի կիրառման հետևանք են:

Ներըմբռնում: Ուսումնասիրել և կարծիք հայտնել սոցիալական նորմերի և հարաբերությունների վերաբերյալ և իրականացնել դրանց փոփոխությանը միտված գործողություններ:

ՄՈԴՈՒԼԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ
Մոդուլի թվանիշը
Մոդուլի անվանումը/ շնորհվող որակավորումը
Ֆակուլտետը
ECTS կրեդիտները
Կիսամյակը
Մոդուլի համակարգողը
Հասանելի՞ է արդյոք օտարերկրացի ուսանողներին:
Հասանելի՞ արդյոք ընտրված ծրագրի շրջանակից դուրս:

Մոդուլի նկարագիրը
Լրացուցիչ տեղեկություններ մոդուլի վերաբերյալ (ծրագրային հավատարմագրում)
Մոդուլի բովանդակությունը
Մոդուլի համար նախնական գիտելիքի պահանջ
Մոդուլին համընթաց ձևավորվող գիտելիքի պահանջ

Մոդուլի ուսումնառության արդյունքները
Մոդուլը բարեհաջող ավարտելուց հետո շրջանավարտը պետք է կարողանա՝ Նշում՝ 5 կրեդիտ ունեցող մոդուլի համար հանձնարարելի է ուսումնառության 4 արդյունք
Ուսումնառության արդյունք 1
Ուսումնառության արդյունք 2
Ուսումնառության արդյունք 3
Ուսումնառության արդյունք 4
Ուսումնառության արդյունք 5
Ուսումնառության արդյունք 6
Ուսումնառության արդյունք 7
Ուսումնառության արդյունք 8

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ
Դասավանդման և ուսումնառության մեթոդները
Դասախոսություն (ժամերը)
Լաբորատոր/գործնական աշխատանքներ (ժամերը)
Անհատական պարապմունքներ/խորհրդատվություններ (ժամերը)
Պլանավորված ուսումնառության գործընթացներ (ժամերը)
Ուսանողի անհատական աշխատանքներ (ժամերը)

ԳՆԱՀԱՏՈՒՄ
Ընթացիկ գնահատում
Ընթացիկ գնահատման %-ը
Համալսարանի պլանային գրավոր քննություն
Համալսարանի պլանային գրավոր քննության %-ը
Գնահատման այլ տեսակներ
Գնահատման այլ տեսակների %- ը
Ընդհանուր գնահատականներ (total marks)
Պատժամիջոցներ
Անցողիկ շեմ
Աշնանային լրացուցիչ քննություն
Համալսարանի պլանային քննություն (աշնանը)
Համալսարանի աշնանային պլանային քննության տևողությունը (ժամերը)

ՀԱՎԵԼՎԱԾ 5.ՄԿԾ ՁԵՎԱՆՄՈՒՇՆԵՐ
ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՍՏԻՃԱՆ (ԴՈՒԲԼԻՆՅԱՆ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ)

ՄԿԾ թվանիշը	
ՄԿԾ անվանումը/ շնորհվող որակավորումը	
Ծրագրի համակարգողը Ֆակուլտետը և բաժինը	
ՈԱԾ-ի մակարդակը/ ԵԲԿՏ մակարդակը/ համապատասխանությունը Դուբլինյան նկարագրիչներին	
Ազգային կրեդիտները	
ECTS կրեդիտները	
Մոդուլների թիվը	
Ծրագրի տևողությունը	
Ծրագրի նկարագիրը	
Իրականացման եղանակը (լրիվ կամ ոչ լրիվ ուսումնական օրով ուսուցում, դեմառդեմ ուսուցում, հեռակա ուսուցում, հեռվար ուսուցում, առցանց ուսուցում, խառը ուսուցում, խտացված ամառային դպրոց, համագործակցային ուսուցում (գործատուների, մասնագիտական միությունների և/կամ այլ բուհերի հետ) և այլն):	
Ուսանողների ընդունելության թիվը և եղանակը Դասակարգել ուսանողների ընդունելության պլանավորված թիվը (և վարձավճարներից ստացված մոտավոր եկամուտը) և եղանակը (օրինակ՝ լրիվ կամ ոչ լրիվ ուսումնական օրով ուսուցում) առաջիկա 5 տարիների համար:	

ՄԿԾ ուսումնառության արդյունքներ. մակարդակ X

Ուղենիշ: Յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար հանձնարարելի է ուսումնառության 8-12 արդյունք՝ խմբերից յուրաքանչյուրում (գիտելիք, նոու հաու և հմտություն, կարողություն) ՄԿԾ ուսումնառության երկու արդյունքի ուղենիշներով:

Ծրագիրը բարեհաջող ավարտելուց հետո շրջանավարտը պետք է կարողանա՝

- ցուցադրել մասնագիտական ոլորտում **գիտելիքներ և ընկալում,** որոնք ձեռք են բերվել միջնակարգ կրթության արդյունքում և, որպես կանոն, այն մակարդակի են, որ համապատասխան բարձրակարգ դասագրքերի կիրառման դեպքում կարող են ներառել այնպիսի գիտելիքներ, որոնց մի մասը տվյալ բնագավառի վերջին ձեռքբերումներն են.
- **կիրառել** գիտելիքներն ու ընկալումը այնպես, որ իր աշխատանքի կամ մասնագիտության նկատմամբ մասնագիտական մոտեցում ցուցաբերվի, և **ունենալ կարողություններ,** որոնք, որպես կանոն, դրսևորվում են փաստարկներ առաջադրելով և դրանք պաշտպանելով, ինչպես նաև մասնագիտական ոլորտում խնդիրներ լուծելով.
- **հավաքագրել և մեկնաբանել** համապատասխան տվյալները (սովորաբար մասնագիտական ոլորտում) և դրանց հիման վրա դատողություններ անել սոցիալական, գիտական և էթիկական տարբեր խնդիրների վերաբերյալ.
- ներկայացնել տեղեկություններ, գաղափարներ, խնդիրներ և դրանց լուծումներ մասնագետներին և ոչ մասնագետներին.
- զարգացնել ուսումնական այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են ուսումնառությունը **ինքնավարության բարձր մակարդակով** շարունակելու համար:

Բակալավրի աստիճանի ՄԿԾ-ի համար կարող է օգտակար լինել ուսումնառության արդյունքների խմբավորումն ըստ գիտելիքի, հմտությունների, կարողությունների, ինչպես նաև այն մոդուլի/ուսումնական միավորի մատնանշումը, որի ուսումնառության արդյունքին համահունչ է:

ՄԿԾ ուսումնառության արդյունք	**Տեսակը (գիտելիք/հմտություն/ կարողություն)**	**Ո՞ր մոդուլի/ուսումնական միավոր(ներ)ի ուսումնառության արդյունքին է համահունչ**
1.		
2.		
3.		
4.		
5.		
6.		

ՄԿԾ ՁԵՎԱՆՄՈՒՇ
ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԱՍՏԻՃԱՆ (ԴՈՒԲԼԻՆՅԱՆ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ)

ՄԿԾ թվանիշը	
ՄԿԾ անվանումը/ շնորհվող որակավորումը	
Ծրագրի համակարգողը	
Ֆակուլտետը և բաժինը	
ՈԱԾ-ի մակարդակը/ ԵԲԿՏ մակարդակը/ համապատասխանությունը Դուբլինյան նկարագրիչներին	
Ազգային կրեդիտները	
ECTS կրեդիտները	
Մոդուլների թիվը	
Ծրագրի տևողությունը	
Ծրագրի նկարագիրը	
Իրականացման եղանակը (լրիվ կամ ոչ լրիվ ուսումնական օրով ուսուցում, դեմառդեմ ուսուցում, հեռակա ուսուցում, հեռավար ուսուցում, առցանց ուսուցում, խառը ուսուցում, խտացված ամառային դպրոց, համագործակցային ուսուցում (գործատուների, մասնագիտական ասոցիացիաների և/կամ այլ բուհերի հետ) և այլն):	
Ուսանողների ընդունելության թիվը և եղանակը Դասակարգել ուսանողների ընդունելության պլանավորված թիվը (և վարձավճարներից ստացված մոտավոր եկամուտը) և եղանակը (օրինակ՝ լրիվ կամ ոչ լրիվ ուսումնական օրով ուսուցում) առաջիկա 5 տարիների համար:	

ՄԿԾ ուսումնառության արդյունքներ. մակարդակ X

Ուղենիշ: Յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար հանձնարարելի է ուսումնառության 8-12 արդյունք՝ խմբերից յուրաքանչյուրում (գիտելիք, նոու հաու և հմտություն, կարողություն) ՄԿԾ ուսումնառության երկու արդյունքի ուղենիշներով:

Ծրագիրը բարեհաջող ավարտելուց հետո շրջանավարտը պետք է կարողանա՝

- ցուցաբերել գիտելիքներ և ընկալում, որոնք հիմնված են բակալավրի աստիճանում ձեռք բերած գիտելիքների վրա և դրանց ծավալումն են, ինչը հնարավորություն է տալիս հետազոտական համատեքստում ինքնուրույնություն և յուրահատուկ մոտեցում դրսևորել գաղափարների մշակման և կիրառման ժամանակ.
- գիտելիքներն ու ընկալումը, ինչպես նաև խնդիրներ լուծելու կարողությունը կիրառել նոր և անծանոթ միջավայրում, մասնագիտական ոլորտին առնչվող ավելի լայն (միջառարկայական) համատեքստում.
- ցուցաբերել գիտելիքները համախմբելու և բարդ խնդիրներ լուծելու ունակություն, ինչպես նաև թերի կամ սահմանափակ տեղեկությունների հիման վրա ձևակերպել դատողություններ, որոնք ներառում են մտորումներ իրենց գիտելիքի և դատողությունների կիրառման հետ կապված սոցիալական և էթիկական պատասխանատվության վերաբերյալ.
- սեփական եզրակացությունները և դրանց հիմքում ընկած գիտելիքներն ու հիմնավորումները պարզ ու հստակ ներկայացնել մասնագետներին և ոչ մասնագիտներին.
- ունենալ սովորելու հմտություններ՝ ուսումնառությունը մեծապես ինքնուրույն կամ ինքնավար կերպով շարունակելու համար:

Ուսումնառության արդյունքների քարտեզագրում

	Մոդուլի/ուսումնական միավորի ուսումնառության ակնկալվող արդյունքներ * ուսումնառության ակնկալվող արդյունք՝ ՌԻԱԱ	ՄԿԾ ուսումնառության ակնկալվող արդյունքներ							
No	Մոդուլի/ուսումնական միավորի անվանումը	1	2	3	4	5	6	7	8
1	ՌԻԱԱ 1-ը համահունչ է ՄԿԾ հետևյալ ՌԻԱԱ-ներին								
2	ՌԻԱԱ 2-ը համահունչ է ՄԿԾ հետևյալ ՌԻԱԱ -ներին								
3	ՌԻԱԱ 3-ը համահունչ է ՄԿԾ հետևյալ ՌԻԱԱ -ներին								
4	ՌԻԱԱ 4-ը համահունչ է ՄԿԾ հետևյալ ՌԻԱԱ -ներին								

Մոդուլի/Ուսումնական միավորի նկարագրիչներ
Ձևանմուշ

1.	Մոդուլի/ ուսումնական միավորի թվանիշը	
2.	Մոդուլի/ ուսումնական միավորի անվանումը	
3.	Առարկայական ոլորտը	
4.	Ֆակուլտետը/բաժինը	
5.	ՄԿԾ-ն(երը), որի շրջանակում իրականացվում է մոդուլը/ ուսումնական միավորի	
6.	Կրթուղի(ներ)	
7.	Մակարդակը	
8.	Ազգային կրեդիտները	
9.	ECTS կրեդիտները	
10	Հիմնական կամ կամընտրական	
11	Մոդուլի/ուսումնական միավորի պահանջները (մոդուլի համար նախնական գիտելիքի պահանջ, մոդուլին համընթաց ձևավորվող գիտելիքի պահանջ, անհամատեղելի մոդուլներ)	
12	Ընդունելի է...	
13	Բացառված համակցությունները	
14	Լսարանային ժամերը	Ընդհանուր ժամերի թիվը Ժամերի բաշխումը
15	Ինքնուրույն աշխատանքի ժամերը	Ընդհանուր ժամերը
16	Մոդուլի/ուսումնական միավորի տեղադրությունը	
17	Մասնաշենքի տեղակայումը	
18	Մոդուլի/ուսումնական միավորի համակարգողը	
19	Մոդուլի/ ուսումնական միավորի հակիրճ նկարագիրը	
20	Օրինակելի ուսումնական ծրագիր	
21	Մոդուլի/ուսումնական միավորի ուսումնառության արդյունքները *Ծրագիրը բարեհաջող ավարտելուց հետո շրջանավարտը պետք է կարողանա՝* 1.	*Ինչպե՞ս է գնահատվում*

	2. 3. 4. 5.	
22.	**ՄԿԾ ուսումնառության այն արդյունքը, որի հետ կապվում է այս մոդուլը/ուսումնական միավորը**	
23.	**Դասավանդում և ուսումնառություն**	
24.	**Գնահատում և հետադարձ կապ** *Հնավորող վարժություններ և առաջադրանքներ*	
25.	**Գնահատում և հետադարձ կապ** *Ամփոփիչ գնահատում* 1. 2. 3. 4. 5.	*Տավալը %*
26.	**Ուսումնառության ռեսուրսները** *Հիմնական նյութերը* *Հիմնական առցանց և էլեկտրոնային ռեսուրսները*	
27.	**Նախապատրաստական աշխատանք և խորհրդատվություն**	

Ցուցումներ մոդուլի/ ուսումնական միավորի նմուշի վերաբերյալ

Մոդուլի/ուսումնական միավորի նկարագրիչները ՄԿԾ շրջանակում իրականացվող հավատարմագրված ուսումնական միավորի հիմնական առանձնահատկությունների ձևակերպումն են: Բոլոր մոդուլները պետք է հաստատվեն բուհի որակի կառավարման գործընթացների շրջանակում: Քանի որ մոդուլի/ուսումնական միավորի նկարագրիչները ուսանողների համար տեղեկատվության և խորհրդատվության կենսական աղբյուր են ուսումնառությանը նախորդող և բուն ուսումնառության ժամանակահատվածում, նկարագրիչները, որտեղ հնարավոր է, պետք է հասցեագրված լինեն ուսանողներին՝ «ձեզ»:

1. Մոդուլի/ուսումնական միավորի թվանիշը

Սա մոդուլի/ուսումնական միավորի եզակի նույնականացման համարն է, որը տեղեկություն է ներառում մոդուլի առարկայական ոլորտի և ուսումնառության մակարդակի վերաբերյալ:

2. Մոդուլի/ուսումնական միավորի անվանումը

Մոդուլի/ուսումնական միավորի ամբողջական անվանումը:

3. Առարկայական ոլորտը

Սա մոդուլի/ուսումնական միավորի հիմնական բնագավառն է:

4. Ֆակուլտետը/բաժինը

Այն ֆակուլտետը և բաժինը, որին «պատկանում» է մոդուլը/ուսումնական միավորը: Անհրաժեշտ է հղում կատարել նաև այն բաժիններին, որտեղ ևս իրականացվում է այդ մոդուլի/ուսումնական միավորի դասավանդումը:

5. ՄԿԾ-ն (երը), որի (որոնց) շրջանակում իրականացվում է մոդուլը/ուսումնական միավորը

Սահմանել այն ՄԿԾ-ները, որոնց շրջանակում դասավանդվում է այս մոդուլը/ուսումնական միավորը:

6. Կրթուղի

Թվարկված կրթուղիների համար նշել ցանկացած պահանջ:

Մակարդակը

Որակավորումների շրջանակի առկայության պայմաններում յուրաքանչյուր մոդուլի/ուսումնական միավորի համար անհրաժեշտ է համապատասխան մակարդակ սահմանել: Այն չպետք է նույնը լինի, ինչ ՄԿԾ մակարդակն է: ՄԿԾ մակարդակում պետք է իրականացվեն ՄԿԾ ավարտական տարվա բոլոր մոդուլները, մինչդեռ ավելի վաղ իրականացվող մոդուլները կարող են համապատասխանել ավելի ցածր մակարդակների:

7. Ազգային կրեդիտները

Նկարագրել կրեդիտների ցանկացած ազգային համակարգ

8. ECTS: Կրեդրտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը

Ներկայացնել ազգային կրեդիտների և ECTS կրեդիտների համարժեքացման որևէ օրինակ: Ուսանողի ուսումնառության 20-30 ժամը սովորաբար հավասարեցվում է 1 ECTS կրեդիտի:

9. Հիմնական կամ կամընտրական

Հիմնական մոդուլը/ուսումնական միավորը պարտադիր է ՄԿԾ տվյալ մակարդակում սովորող բոլոր ուսանողների համար: Կամընտրական մոդուլը/ուսումնական միավորը (առկայության դեպքում) ուսանողներին հնարավորություն է ընձեռում ընտրելու կամ չընտրելու տվյալ մոդուլը/ուսումնական միավորը՝ ըստ իրենց հետաքրքրությունների:

10. Մոդուլի/ուսումնական միավորի պահանջները (մոդուլի համար նախնական գիտելիքի պահանջ, մոդուլին համընթաց ձևավորվող գիտելիքի պահանջ ,անհամատեղելի մոդուլներ)

Թվարկել այն մոդուլները, որոնք նախապայման կամ ընթացիկ պահանջ են հանդիսանում ՄԿԾ-ի համար:

11. Ընդունելի է...

Թվարկել այլ ՄԿԾ-ներ, որոնք տվյալ մոդուլը/ուսումնական միավորը ընդունելի են համարում իրենց ուսանողների համար:

12. Բացառված համակցությունները

Թվարկել ՄԿԾ այն մոդուլները, որոնք չեն կարող իրականացվել տվյալ մոդուլի/ուսումնական միավորի հետ համատեղ:

13. Լսարանային ժամերը

Մոդուլի/ուսումնական միավորի իրականացման ընթացքում այն ամբողջ ժամանակահատվածը (ժամերով հաշվարկված), որի ընթացքում յուրաքանչյուր ուսանող կարող է ուղղակիորեն շփվել իր դասախոս (ներ)ի հետ: Սա ներառում է դեմառդեմ դասավանդման/ուսումնառության ժամերը (օրինակ՝ դասախոսություններ, սեմինարներ, աշխատաժողովներ, լաբորատոր աշխատանք, ոլորտային/ուսումնական այցեր, անհատական պարապմունքներ/խորհրդատվություններ և այլն), և, հնարավորության դեպքում, համապատասխան առցանց/էլեկտրոնային ուսումնառության ժամերը (օրինակ՝ վեբինարներ, անհատական խորհրդատվություններ Skype-ով):

Ընդհանուր ժամերի բաշխումը ուսանողներին գաղափար է տալիս, թե նրանք որքան ժամանակ պիտի տրամադրեն հիմնական ուսումնական պարապմունքներին: Օրինակ՝ 20 կրեդիտ ունեցող մոդուլում/ուսումնական միավորում լսարանային ժամերը կարող են

կազմել 40 ժամ՝ բաշխվելով հետևյալ կեպ. դասախոսություն՝ 5 ժամ , սեմինար՝ 20 ժամ , էքսկուրսիաներ՝ 6 ժամ, վեբինար՝ 5 ժամ , դասախոսություն Skype-ով՝ 2 ժամ, և անհատական պարապմունք / խորհրդատվություն՝ 2 ժամ , կամ երկօրյա ուսումնառություն գիշերակացով՝ 16 ժամ, վեբինար՝ 20 ժամ, և պարապմունք Google Hangout-ով՝ 4 ժամ :

14. Ինքնուրույն աշխատանքի ժամերը

Սա այն ժամանակն է, որը լսարանային պարապմունքների համար նախատեսված ժամերից բացի ուսանողները պետք է ծախսեն սովորելու վրա: Օրինակ՝ 10 ECT (200-300 ժամ) կրեդիտ ունեցող մոդուլի/ուսումնական միավորի շրջանակում, որը ներառում է 40 լսարանային ժամ, ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվում է 160-260 ժամ:

Մոդուլի/ուսումնական միավորի տևողությունը

Այն ժամանակահատվածն է, որը ծախսվում է մոդուլի/ուսումնական միավորի իրականացման վրա, օրինակ՝ 30 շաբաթ I, II և III քառորդներում (հետբուհական ծրագրեր), կամ 15 շաբաթ՝ II կիսամյակի ընթացքում (բակալավրական աստիճանի ծրագրեր).

15. Մասնաշենքի տեղակայումը

Սա այն հիմնական մասնաշենքն է, որտեղ անցկացվում են պլանավորված դասերը:

16. Մոդուլի/ուսումնական միավորի համակարգողը

Պրոֆեսորադասախոսական կազմի այն անդամն է, որի վրա պաշտոնապես դրված է մոդուլի/ուսումնական միավորի որակի՝ իրականացման, կառավարման, գնահատման և նշանակված գնահատականների պատասխանատվությունը: Այն դեպքերում, երբ նշանակված համակարգողը այլևայլ պատճառներով (օրինակ՝ հետազոտական գործուղման պատճառով) անկարող է իրականացնել իր գործառույթները, կարող է նշանակվել փոխարինող համակարգող, որի նշանակումը պետք է հաստատվի ուսումնական հաստատության ղեկավարի կողմից:

17. Մոդուլի/ուսումնական միավորի նկարագիրը

Ուսանողների համար մշակել մոդուլի/ուսումնական միավորի նկարագիրը, օրինակ՝ ինչպես է այն կապվում ՄԿԾ ընդհանրական նպատակների հետ, որն է մոդուլի/ուսումնական միավորի հիմնական համատեքստը, ինչ տեսություններ և գաղափարներ, թեմաներ, խնդիրներ, վիճահարույց հարցեր է ներառում այն, ուսումնական ինչ նմուշներ ու հարցեր են քննարկվելու մոդուլի/ուսումնական միավորի շրջանակում, ուսումնառության ինչ տեսակներ են կիրառվելու ուսանողների կողմից, ինչպիսի գիտական, անձնական և մասնագիտական արժեքներ կձևավորվեն ուսումնառության արդյունքում:

18. Օրինակելի ուսումնական ծրագիր

Ուսումնական ծրագրի հակիրճ նկարագիր:

19. Դասավանդում և ուսումնառություն

Ուսանողներին ներկայացնել ուսումնական գործունեության պլանավորված տեսակների ողջ համակազմը (աշխատաժողովներ, սեմինարներ, պարապմունքներ, ուսումնական այցեր, վեբինարներ և այլն), որոնց պետք է մասնակցեն նրանք, և մեկնաբանել, թե գործունեության նշված տեսակներն ինչպես են կապվում ուսանողների՝ ինքնուրույն ուսումնառության ընթացքում կատարած աշխատանքի հետ, օրինակ՝ նախապատրաստում դասերին, նախագծերի մշակում և ներկայացում, ընթերցանություն, լսարանային/լաբորատոր/խմբային աշխատանքներ, ձևավորող առաջադրանքներ և ամփոփիչ գնահատում, նախապատրաստում քննություններին և այլն: Ինքնուրույն աշխատանքի ժամերը ճիշտ օգտագործելու և բաշխելու հարցում ուսանողներին ցույց տրված աջակցությունը, նրանց կօգնի գործելու ավելի արդյունավետորեն և բարձրացնելու իրենց ուսումնառության որակը:

20. ՄԿԾ ուսումնառության որ արդյունքներին են համահունչ Մոդուլի/ուսումնական միավորի ուսումնառության արդյունքները

Սահմանել, թե ՄԿԾ ուսումնառության որ արդյունքները ձեռք կբերվեն այս մոդուլը/ուսումնական միավորը բարեհաջող ավարտելու դեպքում:

21. Ուսումնառության արդյունքներ

Ուսումնառության արդյունքները պետք է բխեն ՄԿԾ նպատակներից և հակիրճ ցանկի տեսքով հստակ ձևակերպված լինեն որպես ուսումնառության նկարագրիչներ: Ուսանողների կողմից ուսումնառության արդյունքների ձեռքբերումը պետք է ստուգել ամփոփիչ գնահատման միջոցով: Այսպիսով, «Ինչպե՞ս է գնահատվում» խորագիրը կրող սյունակը պետք է ներկայացնի այն ամփոփիչ գնահատումը, որով ստուգվում է ուսումնառության յուրաքանչյուր արդյունքի ձեռքբերումը, օրինակ՝ «ուսումնառության արդյունք 1 – ամփոփիչ գնահատում 3» (բոլոր մոդուլների ուսումնառության արդյունքները պետք է համահունչ լինեն ՄԿԾ նպատակներին և ներկայացված լինեն «Մասնագիտության կրթական ծրագրի՝ ուսանողի ձեռնարկում»՝ արտացոլելով, թե յուրաքանչյուր մոդուլը/ուսումնական միավորը ինչպես է նպաստում ՄԿԾ մեկ կամ ավելի նպատակների իրականացմանը):

22. Գնահատում և հետադարձ կապ

ա. Ձևավորող վարժություններ և առաջադրանքներ

Ուսանողներին հակիրճ ներկայացնել այն ձևավորող վարժությունների ու առաջադրանքների տեսակներ , որոնք նրանք կատարելու են: Ձևավորող վարժությունները այնպես են մշակված, որ նախքան ամփոփիչ գնահատումը ուսանողներին հնարավորություն ընձեռեն զարգացնելու իրենց ուսումնառության որոշակի ասպեկտները: Բացի նրանից, որ ձևավորող վարժությունները ուսանողներին (անհատապես կամ խմբովին) թույլ են տալիս ուղենշել իրենց առաջընթացը, դրանք նաև պետք է այնպես մշակված լինեն, որ նրանց օգնեն օգտագործելու հետադարձ կապն ու վերլուծական ինքնանդրադարձը իրենց ուսումնառության

կառավարման և զարգացման գործընթացում, որպեսզի նրանք հասկանան, թե ինչպես կարող են բարելավել իրենց աշխատանքը: Հետադարձ կապը կարող է լինել դասախոսներից, համակուրսեցիներից, մենթորներից, կամ արտաքին լսարանի ավելի լայն զանգվածից: Ձևավորող վարժությունները կարող են բազմատեսակ լինել, իրականացվել լսարանում կամ լսարանից դուրս և պաշտոնապես չեն գնահատվում (ձևական գնահատական չի դրվում): Դասախոսները կարող են կիրառել ձևավորող վարժությունները՝ վերահսկելու ուսանողների ուսումնառության տեմպն ու առաջընթացը մոդուլի/ուսումնական միավորի ընթացքում, և դրանց համապատասխանեցնել դասավանդման տեմպն ու նյութը:

բ. Ամփոփիչ գնահատում

Ուսանողների համար մշակել մոդուլի/ուսումնական միավորի ամփոփիչ գնահատման բաղադրիչների հակիրճ նկարագիրը և դրանց մոտավոր կշիռները: Օրինակ՝ «30 րոպե տևողությամբ խմբային ներկայացում սեմինարում (20%), հետազոտության թեմայով 3000 բառից կազմված ակնարկ (60%), գիտելիքի ստուգման մեկժամյա քննություն՝ բազմակի ընտրությամբ թեստով (20%)»: Ամփոփիչ գնահատումն ուսանողի աշխատանքին տրված պաշտոնական գնահատականը (թվանշանը/ուսումնական միավորն) է: Ամփոփիչ գնահատման աշխատանքները պետք է մշակվեն (խմբովին)՝ ստուգելու համար, թե ուսանողները որքանով են ձեռք բերել մոդուլի/ուսումնական միավորի ուսումնառության բոլոր արդյունքները: Նշանակված գնահատականները կներառվեն ուսանողների առաջադիմությունն արտացոլող տեղեկագրերում:
Ամփոփիչ գնահատումը պետք է արժանահավատ, հուսալի և արդարացի լինի բոլոր ուսանողների համար: Գնահատման գործընթացների թիվը, բազմազանությունը, բնույթը, ժամանակացույցն ու հաճախականությունը, ինչպես նաև դրաց առնչվող հետադարձ կապի որակը, մեծ ազդեցություն կունենան ուսանողների ուսումնառության բոլոր կողմերի վրա:

23. Ուսումնառության ռեսուրսները

ա. Հիմնական նյութեր

Սրանք այն նյութերն են, որոնք մոդուլի/ուսումնական միավորի ընթացքում պետք է ուսումնասիրվեն կամ օգտագործվեն բոլոր ուսանողների կողմից («Մոդուլի/Ուսումնական միավորի ձեռնարկում» անհրաժեշտ է ներառել գրականության ամբողջական ցանկը): Հնարավորության դեպքում, հիմնական նյութերը պետք է հասանելի լինեն առցանց տիրույթում: Նյութերի հղումները պետք է տրվեն բուհի կողմից սահմանված կարգով:

բ. Հիմնական առցանց և էլեկտրոնային ռեսուրսներ

Կազմել այն վստահելի վեբ-կայքերի, համակարգչային ծրագրերի, տեսանյութերի և էլեկտրոնային այլ ռեսուրսների ցանկը, որոնք կխթանեն ուսանողների ուսումնառությունը

մոդուլի/ուսումնական միավորի ընթացքում:

24. Նախապատրաստական աշխատանք

Կրթությունը շարունակող և ապագա ուսանողները հաճախ ցանկանում են իմանալ, թե ինչպես կարելի է մինչ մոդուլների սկսվելը լավագույնս նախապատրաստվել դասերին: Անհրաժեշտ է որոշ խորհուրդներ տալ մեկ-երկու թեմաների շուրջ, որոնց վերաբերյալ ուսանողները ցանկության դեպքում կարող են ինչ-որ նյութեր կարդալ կամ ինքնուրույն ինչ-որ աշխատանքներ կատարել ծրագրին նախապատրաստվելիս:

Մոդուլի ուսումնառության արդյունքների չափանիշներ

Չնայած ուսումնառության արդյունքների մշակման գործընթացը կարող է բավական պարզ թվալ, սակայն առկա են որոշակի մարտահրավերներ, օրինակ՝

- ուսումնառության չափից շատ արդյունքների ներառումը,
- մեկ ուսումնառության արդյունքի մեջ շատ բայերի օգտագործումը,
- միևնույն բայի չափից ավելի օգտագործումը կամ ոչ հստակ տերմինների կիրառումը,
- ուսումնառության այնպիսի արդյունքների սահմանումը, որոնք իրատեսական չեն՝ հաշվի առնելով ռեսուրսները/ժամանակը/գնահատման մոտեցումը,
- անհամապատասխանությունը (երբ մոդուլի ուսումնառության արդյունքները որևէ կապ չունեն ՄԿԾ ուսումնառության արդյունքների հետ),
- ճանաչողական անհամապատասխան մակարդակի կիրառումը:

Այս մարտահրավերները կարելի է հաղթահարել ուսումնառության արդյունքների վերանայման գործընթացում՝ հաշվի առնելով մոդուլի ուսումնառության արդյունքների չափանիշների հետևյալ ցանկը:

**Ուսումնառության արդյունք՝ ՈՒԱ*

_____ _____

Ակտիվ/գործող: ՈՒԱ-ները նկարագրո՞ւմ են, թե ուսանողները ինչ պետք է կարողանան անել:

_____ _____

Գրավիչ: Ուսանողները կցանկանա՞ն ձեռք բերել այդ ՈՒԱ-ները:

_____ _____

Հասկանալի: Ուսանողները/գործատուները կկարողանա՞ն հասկանալ այդ ՈՒԱ-ները:

_____ _____

Պատշաճ: Օգտագործված բայերը համապատասխանո՞ւմ են ուսումնառության տվյալ մակարդակին և տիրույթին:

_____ _____

Հասանելի/իրատեսական: Ուսանողների մեծամասնությունը կկարողանա՞ արդյոք բավարար ջանքերի գործադրմամբ ձեռք բերել այդ ՈՒԱ-ները:

_____ _____

Գնահատելի: Հնարավո՞ր է ստուգել՝ ՈՒԱ-ները ձեռք են բերվել, թե ոչ:

Համապատասխանեցված: ՈՒԱ-ները համապատասխանո՞ւմ են դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացներին:

Տեսանելի: Ուսանողները գիտե՞ն, թե ինչ ՈՒԱ-ներ ձեռք կբերեն ուսումնառության արդյունքում:

(Փոփոխություններով փոխառված է Բաումից, 2009)

Մոդուլի կառուցողական համապատասխանեցման ձևանմուշ

Ուսումնառության ակնկալվող ուսումնառություն արդյունքներ	Գնահատում	Դասավանդում և
Մոդուլի բարեհաջող ավարտի դեպքում ուսանողը պետք է կարողանա՝	Շարունակական գնահատում % Ավարտական քննության ձևաչափ %	Ուսանողներն ի՞նչ պետք է անեն սովորելու համար
ՈՒԱ 1		
ՈՒԱ 2		
ՈՒԱ 3		
ՈՒԱ 4		
ՈՒԱ 5		
ՈՒԱ 6		
ՈՒԱ 7		
ՈՒԱ 8		

ՀԱՎԵԼՎԱԾ 6.
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (փաթեթ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԿԾ ՆԿԱՐԱԳԻՐԸ (բակալավրի և մագիստրոսի աստիճանների համար առանձին-առանձին)

- Նպատակ
- Խնդիրներ
- Որակավորում
- Ուսուցման ձև
- Տևողություն

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

- Պահանջներ
- Գնահատում
- Չափանիշեր

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Գիտելիք
- Հմտություն
- Կարողություն

ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

- Գնահատման մեթոդներ
- Գնահատման սանդղակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

(բակալավրի և մագիստրոսիուսումնական ծրագրերի համար)

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ
ԹՈՂԱՐԿՈՂ ԱՄԲԻՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀԱՎԵԼՎԱԾ 7.
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Դասավանդման ձևերը

Դասավանդման հիմնական ձևերն են՝ դասախոսություններ, սեմինարներ, լաբորատոր և գործնական պարապմունքներ, պրակտիկա, կուրսային աշխատանք/նախագիծ, բակալավրի, մագիստրոսի թեզեր և ատենախոսություններ, խորհրդատվություն և այլն:

Դասախոսությունը միգործընթաց է, որի մեջներգրավվումենթե՛ դասախոսը, թե՛ ուսանողները, և նրանց համագործակցությունն ուսանողներին օգնում է ընկալելու դասավանդվող առարկայի հիմնական հասկացությունները: Դասախոսությունը պահանջում է նյութի ստեղծագործական և կենդանի մատուցում՝ շեշտադրելով հիմնական հասկացությունները, սահմանումները, անվանումներն ու ենթադրությունները, և նպաստում է հիմնական հասկացությունների գիտական ու տրամաբանական կայուն ընկալմանը: Տեսողական նյութերն օգնում են բացատրելու դասախոսության միջոցով փոխանցվող գաղափարները:

Դասախոսության ժամանակ ուսումնասիրված նյութը ուսանողի **անհատական աշխատանքի** միջոցով դառնում է նրա գիտելիքի բաղադրատարր և նպաստում է ուսանողի գիտելիքի ամբողջական համակարգի ձևավորմանը: Ուսանողներին պետք է քաջալերել ինքնուրույն սովորելու, քանի որ դա է ինքնուրույն մտածողության, վերլուծության և եզրահանգման հիմքը:

Դասախոսության ժամանակ մատուցված տեսական նյութի և ինքնուրույնաբար ձեռք բերված տեղեկությունների յուրացմանը նպաստում են դասավանդման այնպիսի կարևոր ձևեր, ինչպիսիք են լաբորատոր և գործնական պարապմունքները:

Սեմինարների նպատակն է ուսանողներին հնարավորություն ընձեռել խորացնելու դասախոսության ժամանակ կամ ինքնուրույն աշխատանքի շրջանակում ուսումնասիրված թեմաների վերաբերյալ իրենց գիտելիքները, գտնելու և ընկալելու լրացուցիչ տեղեկություններ, պատրաստելու լուսապատկերաշարեր, գրելու շարադրություններ և այլն: Սեմինարի ժամանակ ներկայացվում և քննարկվում են զեկուցումներ, արվում են համապատասխան եզրակացություններ: Այս գործընթացները համակարգում է սեմինարի ղեկավարը:

Լաբորատոր պարապմունքն ավելի իրազննական է և ուսանողներին օգնում է փորձեր կատարելիս ավելի լավ ընկալելու համապատասխան գործընթացներն ու երևույթները: Լաբորատոր պարապմունքի ժամանակ ուսանողը սովորում է՝ ինչպես կարելի է օգտագործել, կարգավորել և վերանորոգել լաբորատոր սարքավորումները: Փորձարարական ուսումնական լաբորատորիաներում ձեռք բերված հմտություններն օգնում են ավելի լավ հասկանալ դասախոսության և անհատական ուսումնառության ժամանակ ուսումնասիրված տեսական նյութերը:

Գործնական պարապմունքի նպատակը տեսական նյութի աստիճանական յուրացումն է՝ որոշակի խնդիրների լուծման միջոցով. սա ինքնուրույն աշխատանքի հմտությունների ձևավորման հիմքն է: Դասախոսը պետք է հատուկ ուշադրություն դարձնի խնդիրների լուծման

մեթոդներին, նախագծերի, էսքիզների և գծապատկերների պատրաստմանը, հաշվարկման համապատասխան մեթոդների կիրառմանը:

Պրակտիկան ուսանողներին օգնում է խորացնել և ամրապնդել ձեռք բերած գիտելիքները, ձևավորում է տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ, ինչպես նաև խնդիրների լուծման ժամանակ օգտագործելու ուսումնասիրության առարկային բնորոշ մեթոդներ:

Կուրսային աշխատանքի/նախագծի իրականացումը ստեղծագործական գործընթաց է: Այն ներառում է և՛ տեսական, և՛ գործնական բաղադրիչներ: Նախագծերը, ըստ էության, ուսանողի անհատական աշխատանքի առաջին արդյունքն են, թեև իրականացվում են դասախոսի անմիջական ղեկավարությամբ: **Նախագծի իրականացման և հետագա ներկայացման ժամանակ** ուսանողը կիրառում է խնդիրների լուծման հետ կապված գիտելիքներն ու հմտությունները: Դասավանդման այս ձևը մեծացնում է ուսանողի մոտիվացումը և պատասխանատվությունը: Նախագծի վրա աշխատանքը ներառում է պլանավորման, հետազոտության, գործնական աշխատանքի և արդյունքների ներկայացման փուլերը՝ ընտրված խնդրին համապատասխան: Նախագիծը ավարտված է համարվում, եթե արդյունքները ներկայացվում են հստակ, համոզիչ և ճշգրիտ կերպով: Նախագծերը արժեքավոր են, քանի որ կարող են իրականացվել անհատապես, զույգերով և խմբով, ինչպես նաև մեկ կամ ավելի առարկաների շրջանակում (առարկաների ինտեգրում), և ավարտից հետո ներկայացվում են ավելի մեծ լսարանի:

Թեզը/ատենախոսությունը (բակալավրական, մագիստրոսական, թեկնածուական և դոկտորական) բուհում դասավանդման գործընթացի վերջին փուլն է: Թեզի նպատակն է համակարգել ուսանողների ստացած տեսական ու գործնական գիտելիքները և գիտական, տեխնիկական, տնտեսական կամ արդյունաբերական որևէ խնդրի հիմնավորված լուծումը տալ: Թեզը պետք է արտացոլի հետազոտական մեթոդներին տիրապետելու և առաջադրված խնդիրների շուրջ փորձեր կատարելու ուսանողի ունակության մակարդակը, ինչպես նաև ապագա մասնագիտության ոլորտում ինքնուրույն աշխատելու նրա պատրաստակամությունը: Թեզի իրականացումը ղեկավարում է որևէ փորձառու դասախոս:

Խորհրդատվությունների ժամանակ դասախոսը պետք է օգնի ուսանողներին ձեռք բերելու ինքնուրույն աշխատանքի հմտություններ, սովորելու՝ ինչպես պետք է ճիշտ օգտագործել հետազոտության ռեսուրսները, և լուծելու ինքնուրույն աշխատանքի ընթացքում ծագող խնդիրները:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները

Որպես ուսանողակենտրոն ուսուցման և ուսանողների ուսումնառության գործընթացի միջնորդներ՝ դասախոսները որոշակի նպատակի իրականացման համար հաճախ կիրառում են միմյանց լրացնող տարբեր մեթոդների այլևայլ համակցություններ:

Դասավանդման և ուսումնառության ամենատարածված մեթոդները, ինչպես նաև նրանց սահմանումները ներկայացված են ստորև: Սակայն ցանկը, անշուշտ, ամբողջական չէ:

- **Քննարկում/բանավեճ:** Սա փոխգործուն ուսուցման ամենատարածված տեսակն է, որը մեծապես բարձրացնում է ուսանողների ներգրավվածության աստիճանն ու գործունեության որակը: Քննարկումը կարող է փոխվել փաստարկման՝ զարգացնելով ուսանողների՝ սեփական մտքերն ապացուցելու և հիմնավորելու հմտությունները:
- **Համատեղ ուսուցում:** Սա ուսուցման այն ռազմավարությունն է, որի դեպքում խմբի յուրաքանչյուր անդամ պարտավորված է ոչ միայն ինքը սովորել թեման, այլ նաև օգնել դասընկերոջը՝ այն ավելի լավ յուրացնելու: Խմբի յուրաքանչյուր անդամ խնդրի վրա աշխատում է այնքան, մինչև բոլորը յուրացնեն նյութը:
- **Համագործակցային աշխատանք:** Այս դեպքում ուսանողները բաժանվում են առանձին խմբերի, և յուրաքանչյուր խումբ իր առաջադրանքն է ստանում: Խմբի անդամները հանձնարարված խնդրի վրա աշխատում են անհատապես և միաժամանակ կարծիքներ են փոխանակում խմբի մյուս անդամների հետ՝ խնդիրների ու գործառույթների հնարավոր վերաբաշխմամբ: Այս ռազմավարությամբ ուսանողի առավելագույն ներգրավում է ապահովվում ուսումնառության գործընթացում:
- **Խնդրի վրա հիմնված ուսուցում:** Այս մեթոդը կոնկրետ խնդիրը կիրառում է թե՛ որպես նոր գիտելիքի ձեռքբերման և թե՛ գիտելիքի ինտեգրման սկզբնական փուլ:
- **Էվրիստիկական մեթոդը** հիմնվում է տրված խնդրի քայլ առ քայլ լուծման վրա: Սա իրականացվում է դասավանդման գործընթացում փաստերի անկախ ամրագրման և դրանց միջև կապերի հաստատման միջոցով:
- **Որոշակի դեպքի ուսումնասիրություն:** Դասախոսն ուսանողների հետ քննարկում է որոշակի դեպք, և նրանք խորապես ուսումնասիրում են խնդիրը: Օրինակ՝ ճարտարագիտական անվտանգության ոլորտում կարելի է քննարկում ծավալել որևէ վթարի կամ աղետի վերաբերյալ, կամ քաղաքագիտության ոլորտում կարող է լինել կոնֆլիկտային իրավիճակի, ասենք՝ ղարաբաղյան հիմնահարցի (հայ-ադրբեջանական հակամարտության) ուսումնասիրություն, կամ էլ կարող է լինել կլինիկական որևէ դեպք՝ իրական կամ ենթադրյալ հիվանդով:
- **Մտագրոհ:** Այս մեթոդը ենթադրում է տրված թեմայի վերաբերյալ հնարավորինս շատ և արմատապես տարբեր գաղափարների ու կարծիքների արտահայտում: Այս կերպ պայմաններ են ստեղծվում խնդրի հանդեպ ստեղծագործական մոտեցման ձևավորման համար: Այս մեթոդի կիրառումն արդյունավետ է մեծ խմբերում, որտեղ ուսանողները սահմանումեն խնդիրը/հարցը, թվարկվումեն խնդրի վերաբերյալ իրենց պատկերացումները (դրանք հիմնականում գրի են առվում են գրատախտակին) առանց որևէ քննադատության: Երբ բոլորը ներկայացնում են իրենց նախնական մտքերը, սահմանվում են տվյալ գաղափարի և հետազոտության նպատակի համապատասխանության գնահատման չափանիշները, և բացառման սկզբունքով ընտրվում են առավել համապատասխան մտքերը՝ տվյալ խնդրի լուծման լավագույն գաղափարը դուրս բերելու համար:
- **Դերային խաղեր և սիմուլյացիա (իրավիճակի մոդելավորում).** Նախապես մշակված սցենարով իրականացվող խաղերը ուսանողներին հնարավորություն են ընձեռում խնդիրը տարբեր տեսանկյուններից գնահատելու: Դրանք ուսանողներին օգնում են այլընտրանքային տեսակետներ ձևավորել: Այսպիսի խաղերը, ինչպես

նաև քննարկումները ուսանողներին օգնում են իրենց մտքերն ինքնուրույնաբար արտահայտելու և քննարկումներին մասնակցելու հմտություններ ձևավորել:

- **Ցուցադրման մեթոդը** ենթադրում է տեղեկատվության ներկայացում տեսողական միջոցներով ցանկալի արդյունքի հասնելու նպատակով: Հաճախ խորհուրդ է տրվում նյութը թե՛ դասախոսի, թե՛ ուսանողի կողմից ներկայացնել միաժամանակ և՛տեսողական, և՛ լսողական միջոցներով : Այս մեթոդն արտացոլում է հարցի/խնդրի էությունը:
- **Ինդուկտիվ մեթոդը** սահմանում է ցանկացած գիտելիքի փոխանցման այնպիսի ձև, որի դեպքում ուսումնառության գործընթացում մտքերի հոսքը ուղղվում է փաստերից դեպի ընդհանրացում, այսինքն՝ նյութը ներկայացնելիս գործընթացը ծավալվում է մասնավորից դեպի ընդհանուրը:
- **Դեդուկտիվ մեթոդը** սահմանում է ցանկացած գիտելիքի փոխանցման այնպիսի ձև, որը ընդհանրական գիտելիքի հիման վրա նոր գիտելիքի բացահայտման տրամաբանական գործընթաց է, այսինքն՝ գործընթացը ծավալվում է ընդհանրականից դեպի մասնավորը:
- **Վերլուծական մեթոդն** օգնում է ամբողջական դասավանդման նյութը տրոհել բաղկացուցիչ մասերի: Այս կերպ հեշտացվում է տրված բարդ խնդրի շրջանակում առանձին խնդիրների մանրակրկիտ մեկնաբանման գործընթացը:
- **Համադրական մեթոդը** ենթադրում է առանձին մի քանի խնդիրներից ամբողջական խնդրի ձևավորում: Այս մեթոդն ուսանողներին օգնում է զարգացնելու խնդիրը որպես ամբողջություն տեսնելու կարողությունը:
- **Խոսքային կամ բանավոր մեթոդը** ներառում է դասախոսությունները, հաղորդակցությունը և այլն: Գործընթացի ընթացքում դասախոսը բանավոր բացատրում է նյութը, իսկ ուսանողները յուրացնում ու սովորում են այն՝ ընկալելով և մտապահելով:
- **Գրավոր մեթոդը** ներառում է գործունեության հետևյալ ձևերի կիրառությունը՝ արտագրություն, նշումներ, թեզիսներ, շարադրություններ և այլն:
- **Բացատրական մեթոդը** հիմնվում է դասախոսի ներկայացրած կոնկրետ օրինակների վրա, որոնց մանրակրկիտ վերլուծությունը կատարվում է տրված թեմայի շրջանակում:
- **Գործողություններին միտված դասավանդում:** Սա ենթադրում է դասախոսի և ուսանողի ակտիվ ներգրավում դասավանդման գործընթացում, երբ տեսական նյութին գործնական մեկնաբանություններ են տրվում:
- **Էլեկտրոնային ուսուցումը** ենթադրում է դասավանդման գործընթացում համացանցի և մուլտիմեդիայի տարբեր միջոցների կիրառում: Այն ընդգրկում է դասավանդման գործընթացի բոլոր բաղադրիչները (նպատակը, բովանդակությունը, մեթոդները, միջոցները և այլն), նշված բաղադրիչներն իրականացվում են հատուկ միջոցներով: Առկա է էլեկտրոնային ուսուցման երեք տեսակ.

o Լրիվ բեռնվածությամբ ուսուցում, երբ դասավանդման գործընթացը տեղի է ունենում այն ժամերին, երբ դասախոսները և ուսանողները առցանց կապի մեջ են, և դասավանդման նյութը մատուցվում է էլեկտրոնային տարբերակով:

o Հեռավար ուսուցում, որը ենթադրում է դասավանդման գործընթացի իրականացում՝ առանց դասախոսի: Դասավանդումն իրականացվում է հեռավար եղանակով, էլեկտրոնային ձևաչափով:

o Խառը ուսուցում, որը հիմնականում իրականացվում է հեռավար եղանակով, բայց նրա որոշակի մաս իրականացվում է դեմառդեմ հանդիպումներու ժամանակ:

ՀԱՎԵԼՎԱԾ 8.
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Assessment methods and descriptions

Assessment types for learning, as learning, and of learning



The Higher Education Academy

References

QAA (2006) Code of Practice for the Assurance of Academic Quality and Standards in Higher Education, Gloucester: Quality Assurance Agency for Higher Education.

Brown, S., Race, C., Gibbs, G. (1994) Strategies for Diversifying Assessment. Oxford Centre for Staff Development, UK.

Գնահատման մեթոդները և դրանց նկարագրությունները

Գնահատում ուսումնառության համար , գնահատումն իբրև ուսումնառություն, ուսումնառության գնահատում

Assessment for learning, as learning, and of learning

ԲԿՏ գործիքակազմի ծրագիր, 2012	**Քրիս Վիլսոն**		**«Ուսումնառություն, դասավանդում, գնահատում» խումբ**
Դասընթացի գնահատվող աշխատանքներ	Գնահատվող աշխատանքի ընդհանուր նկարագիր, որի բովանդակությունը կարող է հաղորդվել կամ վերարտադրվել: Թեև գլխավորապես կապված է գրավոր խոսքի հետ (արտացոլելով մասնագիտական լայն միջավայրում գերակայող սովորույթները), այնուամենայնիվ գնահատման գործընթացում ավելի ու ավելի մեծ տարածում են գտնում գրաֆիկական և տեսագրական միջոցների կիրառմամբ իրականացված աշխատանքները: Դրանք կատարվում են ուղղորդվող ուսումնառության ողջ ընթացքում՝ ձևավորող հետադարձ կապի շարունակական ապահովման, ապա նաև ամփոփիչ գնահատման նպատակով:		
Հատկորոշում	***Նկարագրիչ***	***Առավելություններ***	***Դատողություններ***
Ձեկուցում/զեկույց	Տրված թեմայի ուսումնասիրություն՝ կարևորելով լրացուցիչ գրականության և թեմայի համատեքստի հետազոտությունը:	Հարմար է՝ գնահատելու առաջադրված փաստարկների հիմնավորումը , կշռադատումը, տեղեկատվական գրագիտությունը, դատողություններն ու դրանց արտահայտումը:	Գիտելիքի և փաստերի մակերեսային ուսումնառման հնարավորություն, գրագողության վտանգ և գնահատված աշխատանքը մեկուսացած կամ անհատականացված փորձառություն դառնալու միտում:
Գրքերի/հետազոտական աշխատանքների ուսումնասիրություն	Նախատեսված գիտական նյութերի ուսումնասիրություն՝ գաղափարների, հասկացությունների վերլուծությամբ ու գնահատմամբ և հետազոտական փաստարկների փոխկապակցմամբ:	Խթանում է ավելի խոր ներգրավում երկրորդային հետազոտություններում : Ստանդարտացված ձևաչափը խթանում է գնահատման արդյունքների հետևողականությունը:	Գնահատման համար աշխատանքը նախապատրաստելիս «պատճենման (copy-paste)» մեթոդի կիրառման հնարավորություն և գնահատման մշակման գործընթացի մեկուսացում :
Շարադրություն/Էսսե	Հանձնարարված առաջադրանք, որով ուսանողը պետք է ներգրավվի ստեղծագործական գործընթացում՝ ստեղծելով սեփական բառերով տրամաբանորեն և հստակ շարադրված գրավոր աշխատանք:	Ճկուն է և կարող է անհատականացվել՝ ընձեռելով ստանդարտ կամ այլընտրանքային վերնագիր ընտրելու հնարավորություն: Լավ համատեքստ է կրթական ոլորտում հղումներ կատարելու եղանակները գործառելու համար:	Դժվար է ուղղակիորեն կապել համապատասխան կրթական մեթոդների հետ: Հնարավոր է՝ չափազանց ակադեմիական ձևաչափ ունենա և բարդացնի արդյունավետ ուսումնառության կիրառումը:
Թեզ/ատենախոսություն	Ընդլայնված աշխատություն, որը սահմանվում է որպես առաջնային կամ երկրորդային հետազոտություն: Թեմայի ընտրությունը հաճախ աշխատանքի էական բաղադրիչն է լինում: Հիմնականում կիրառվում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ավարտական փուլերում:	Խիստ համապատասխան է ակադեմիական ընդունված կարգերին և մասնագիտական հետազոտության ոլորտի պահանջներին: Անհատական ուսումնառության և նորարարության բաց հնարավորություն է ընձեռում:	Ավանդաբար չափազանց տեքստային բնույթ ունի, հնարավոր է, որ հետազոտությունն ու հարցումները դասակարգվեն ու ամփոփվեն գրելու և խմբագրման ընթացքում:
Լրագրային փորձնական հոդված	Լրագրողական մոտեցման կիրառում տեղեկատվության ուսումնասիրության, հիմնական տվյալների սահմանման/դուրսբերման գործընթացում:	Հասանելի և անհատականացման հնարավորություն ընձեռող ձևաչափ: Խմբային աշխատանքի հնարավորություն՝ ապահովելով համակուրսեցիների կողմից վերջնական արդյունքի գնահատում:	Հնարավոր է պաշտոնականության և քննադատականության պակաս:
Լուրերի փորձնական հեռարձակում	Հետազոտված նյութի տեսագրված ներկայացում, որը պահանջում է	Դինամիկ ձևաչափ, որը հնարավորություն է տալիս արդյունքներն ավելի լայն	Տեխնիկական առումով բարդ է և պահանջում է ռեսուրսների